# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Տեքստիլ Փիփ ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 4 | Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևին (նկարին) համապատասխան: Տաբատ (կանացի) (Ձև 7): Պատրաստվում է ազատթող փողքերով, մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%), ուղիղ է, առանց ծալքերի, ունի բնական մետաքսյա աստառ (8-C5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%) և մուգ կարմիր եզրաշերտ (2581 արտիկուլի մահուդե կտորից): Տաբատի գոտին գոտեմակօղերով է, կոճկվում է ձախ կողմից 2 կոճակով, գրպանները թեք են, ներկարված և ունեն կայծակնաճարմանդ: Տաբատի առջևի մասի յուրաքանչյուր կողմում մշակվում է մեկական սեղմոն՝ արդուկի գծի ուղղությամբ, իսկ ետևի մասի յուրաքանչյուր կողմում՝ երկուական սեղմոն: Տաբատի գոտին ունի 55 մմ լայնություն, գոտու վրա կարվում է 8 կամրջակ, որոնց երկարությունը 55 մմ է, լայնությունը՝ 1,8 սմ, իսկ տաբատի կողքի գրպաններն ունեն 3,5 սմ թեքություն: Տաբատները ներսամասից պետք է ունենան պիտակ, որի վրա պետք է նշված լինի դրանց չափսը: Նախքան տաբատների պատրաստումը տաբատների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Տաբատների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև տաբատների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պիտակավորված, |

| | |
|---|---|
| | պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Текстиль Пип в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԳԳ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 4 | Товары изготавливаются в соответствии с критериями и образцом (фотообразцом), утвержденными постановлением Правительства Республики Армения N 1517-А от 20.12.2018г. Брюки (женские) (Фотообразец 7). Изготавливается со свободными краями, из темно-синей полушерстяной ткани (шерсть 67%, полиэстер 33%, плотностью 317 г/м2, допустимое отклонение: +, - 2%), прямые, без складок, имеет натуральную шелковую подкладку (из артикула 8-С5-ВШ темно-синей ткани плотностью 100 г/м2, допустимое отклонение: +, - 2%) и темно - красную окантовку (из суконной ткани 2581 артикула). Пояс брюк со шлевками, застегивается с левой стороны на 2 пуговицы, карманы косые, вшитые и имеют застежку-молнию. В каждой стороне передней части брюк обрабатывается по-одной вытачке – по направлению линии утюга, а в каждой части задней стороны - по две вытачки. Пояс брюк имеет ширину 55 мм, на поясе шьется 8 мостиков, длина которых 55 мм, ширина 1,8 см, а боковые карманы брюк имеют кривизну 3,5 см. Брюки с внутренней стороны должны иметь ярлык, на котором должен быть указан их размер. До изготовления брюк цветовая гамма брюк согласуется с Покупателем. Полное количество брюк должно изготавливаться из одинаковой ткани. При этом, заранее (до шитья брюк) Продавец представляет Покупателю выданное аккредитованной в РА организацией заключение лабораторного исследования о составе, категории, стабильности краски и поверхностной плотности указанной ткани. Упаковка товаров - в полиэтиленовых прозрачных пакетах, маркированные, на марках должны быть отмечены наименование, количество, размеры товара. Перевозку и разгрузку товаров осуществляет Продавец, за счет |

| | |
|---|---|
| | своих средств, заранее согласовав с Покупателем конкретный адрес поставки. |